

| | |
|--------------------------------|------------------|
| Ընդհանուր հարցերով խորհրդատու՝ | Ամալյա Կոստանյան |
| Մաքսային հարցերով խորհրդատու՝ | Տիգրան Սարգսյան |
| Պատասխանատու խմբագիր՝ | Արևիկ Սարիբեկյան |
| Ձևավորում՝ | Կարեն Մկրտչյան |

Սույն գրքույկի մշակման համար հիմք է ծառայել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությունը: Օգտագործվել են նաև Հայաստանի հաշվապահների և աուդիտորների՝ հարկ վճարողների համար հրատարակված «Պարզեցված ուղեցույցի 3-րդ հատորը:

© 2002 Տարածաշրջանային զարգացման կենտրոն/
Թրանսփարենսի Ինթրնեշնլ հայաստանյան մասնաճյուղ

Նալբանդյան 5, սենյակ 35
Երևան 375010, Հայաստանի Հանրապետություն
Հեռ./ֆաքս. (374 1) 585 578
Էլ. փոստ. Crd_ti@cornet.am

(Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|--|-----------|
| ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ..... | 5 |
| Կազմակերպություններ և ֆիզիկական անձինք5 | |
| ՀՀ մաքսային սահմանով ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումը..... | 5 |
| Կազմակերպությունների հաշվառման ընթացակարգը տարածաշրջանային մաքսատներում..... | 5 |
| ՀՀ մաքսային սահմանով ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերը..... | 6 |
| Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները..... | 7 |
| ԳԼՈՒԽ II. ՆԵՐՄՈՒԾՈՒՄ..... | 8 |
| Կազմակերպություններ..... | 8 |
| Ֆիզիկական անձինք..... | 8 |
| Առանց մաքսային վճարների ՀՀ տարածք ներմուծվող ապրանքները..... | 8 |
| Օտարերկրյա անձանց կողմից ներմուծվող ակնհայտ առևտրային քանակության ապրանքներ..... | 10 |
| Բնահրային կամ գումարային քանակությունները գերազանցող ապրանքների ձևակերպումը..... | 10 |
| Անհատական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումը..... | 11 |
| Ներմուծման համար հատուկ թույլտվություններ պահանջող ապրանքներ..... | 11 |
| Ներմուծման համար արգելված ապրանքներ..... | 12 |
| Պարտադիր սերտիֆիկացում պահանջող ապրանքներ..... | 12 |
| ԳԼՈՒԽ III. ԱՐՏԱՀԱՆՈՒՄ..... | 14 |
| Կազմակերպություններ..... | 14 |
| Ֆիզիկական անձինք..... | 14 |
| Արտահանման համար հատուկ թույլտվություններ պահանջող ապրանքներ..... | 14 |
| Արտահանման համար արգելված ապրանքներ..... | 15 |
| Անհատական օգտագործման տրանսպորտային միջոցների արտահանում..... | 15 |
| Մշակութային արժեքների արտահանումը..... | 16 |
| ԳԼՈՒԽ IV. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... | 18 |
| Մաքսատուրքեր..... | 18 |
| Մաքսավճար..... | 18 |
| Ակցիզային հարկ..... | 18 |
| Դրոշմավորում..... | 19 |
| Ավելացված արժեքի հարկ..... | 19 |
| Հաստատագրված վճարումներ..... | 20 |
| Ավտոմոբիլային ծանապարհներից օգտվելու համար գանձվող ծանապարհային վճար..... | 20 |
| Բնապահպանական վճարներ..... | 20 |
| ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... | 22 |

Չարգելի ընթերցող,

Այս գրքույկը պատրաստվել է Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ հայաստանյան մասնաճյուղի կողմից՝ «Նպաստել հարավկովկասյան հանրապետությունների մաքսային ծառայությունների գործունեության թափանցիկությանը ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվել է «Եվրասիա հիմնադրամի «Համագործակցություն Հարավային Կովկասում ծրագրի կողմից և իրականացվել է Ադրբեջանի Ձեռներեցության զարգացման հիմնադրամի և Վրաստանի Երիտասարդ տնտեսագետների միության հետ համատեղ:

Գրքույկը տպագրվել է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, նպատակ ունենալով նպաստել մաքսային ընթացակարգերի մասին իրազեկության բարձրացմանը: Այն նախատեսված է ինչպես ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցներով ՀՀ մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձանց, այնպես էլ՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների փոխադրումներով զբաղվող կազմակերպությունների համար: Նմանատիպ գրքույկներ տպագրվել են նաև Ադրբեջանում և Վրաստանում՝ այդ երկրների մաքսային ընթացակարգերին ծանոթացնելու համար:

Սույն գրքույկի I մասը պարունակում է ընդհանուր տեղեկություններ ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծման ու արտահանման մաքսային ձևակերպումների, անհրաժեշտ փաստաթղթերի, հաշվառման ընթացակարգի և մաքսային հսկողություն իրականացնելու մասին: Տվյալ տեղեկատվությունը ավելի մանրամասն ներկայացված է գրքույկի II և III մասերում: Մաքսային վճարների, հարկերի ու տուրքերի և այլ պարտադիր վճարների մասին ամփոփ տեղեկությունները ընդգրկված են գլուխ IV-ում:

Հուսով ենք, որ այս գրքույկը օգտակար կլինի Ձեր ճամփորդության և գործունեության ընթացքում:

Բ Ա Ր Ի Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ

ԳԼՈՒԽ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպություններ և ֆիզիկական անձինք

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության երկրի տարածքով տեղափոխվող բոլոր ապրանքներն ու տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման:

ՀՀ մաքսային սահմանով ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումը

- Ապրանքների, տրանսպորտային միջոցների, իրերի, գույքի (նաև ժառանգական), անձնական օգտագործման իրերի ներմուծման (այդ թվում՝ ժամանակավոր ներմուծման) դեպքում.
 - կազմակերպությունների կողմից ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն տարածաշրջանային մաքսատանը (**տես հավելված 1-ը**), որի գործունեության գոտում գտնվում է կազմակերպությունը, մաքսատան աշխատաժամանակի ընթացքում և տվյալ տարածաշրջանային մաքսատան կողմից հաստատված տեղում (մաքսային պահեստների տարածքում):
 - Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն մաքսային կետում, որում դրանք ներմուծվում են, բացառությամբ երկաթուղային տրանսպորտով ներմուծվող՝ չուղեկցվող ապրանքների: Երկաթուղային տրանսպորտով ներմուծվող՝ չուղեկցվող ապրանքների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտին ընդգրկում է քաղաքացու բնակավայրը:
 - ՀՀ մաքսային տարածքով տարանցիկ փոխադրվող ապրանքների մաքսային ձևակերպումն իրականացնում է բացթողման մաքսային կետը՝ սահմանված մաքսային հսկողության գոտում:
- Ապրանքների, տրանսպորտային միջոցների, իրերի, գույքի (նաև՝ ժառանգական), անձնական օգտագործման իրերի **արտահանման** (այդ թվում՝ ժամանակավոր արտահանման) դեպքում.
 - ՀՀ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի (այսուհետև՝ կազմակերպություններ) կողմից արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտում գտնվում է կազմակերպությունը, տարածաշրջանային մաքսատան աշխատաժամանակի ընթացքում և տվյալ տարածաշրջանային մաքսատան կողմից հաստատված տեղում (դրանք սովորաբար մաքսային պահեստների տարածքներն են):
 - ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետև՝ ֆիզիկական անձ) կողմից արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտին ընդգրկում է քաղաքացու բնակավայրը կամ այն մաքսային կետում, որով ապրանքներն արտահանվում են: Մաքսային ձևակերպումը կատարվում է տարածաշրջանային մաքսատան կամ մաքսային կետի աշխատաժամանակի ընթացքում և տարածաշրջանային մաքսատան կամ մաքսային կետի կողմից հաստատված տեղում:

Կազմակերպությունների հաշվառման ընթացակարգը տարածաշրջանային մաքսատներում

- Պետական գրանցում ստացած կազմակերպությունները, որոնք նպատակ ունեն իրականացնել ներմուծման և արտահանման գործառնություններ, պետք է

նախապես հաշվառվեն այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտուն նրանք գրանցված են: Հաշվառվելու նպատակով կազմակերպությունը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- ✓ դիմում համապատասխան մաքսատանը՝ արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտ գրանցվելու մասին.
- ✓ կազմակերպության կանոնադրության պատճենը.
- ✓ կազմակերպության համապատասխան մարմնում պետական գրանցման փաստաթղթի պատճենը.
- ✓ հարկ վճարողի հարկային համար (ՀՎՀՀ)՝ հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից հաշվառման կանգնելու ժամանակ տրամադրվող ութանիշ կոդով քերթիկի պատճենը.
- ✓ տեղեկանք կազմակերպությանը սպասարկող՝ ՀՀ-ում գրանցված բանկից նրա հաշվարկային հաշվի (հաշիվների) վերաբերյալ.
- ✓ լիազորագիր՝ կազմակերպության անունից մաքսային ձևակերպումներն իրականացնող աշխատակցի անունով.

➤ Նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո տարածաշրջանային մաքսատան աշխատակիցների կողմից կազմակերպության անվանումը և ՀՎՀՀ ութանիշ ծածկագիրը մուտքագրվում են ավտոմատ հայտարարագրման համակարգ: Միաժամանակ կազմակերպության վերաբերյալ տվյալները ռադիոհեռագրային համակարգի միջոցով ուղարկվում են սահմանային մաքսային կետեր՝ կետերի համակարգիչների համապատասխան տվյալների բազաներում գրանցելու նպատակով: Այն կազմակերպությունները, որոնք վերը նշված կարգով չեն հաշվառվել համապատասխան տարածաշրջանային մաքսատանը, չեն կարող ՀՀ մաքսային տարածքով ներմուծել կամ արտահանել ապրանքներ:

ՀՀ մաքսային սահմանով ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերը

- ✓ ՀՀ մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ մաքսային հայտարարագիրը.
- ✓ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ձևակերպման փաստաթղթի պատճենը (ապրանքի ձեռքբերման հաշիվ-ապրանքագիր կամ պայմանագիր, կամ դրան փոխարինող այլ համապատասխան փաստաթուղթ), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ապրանքը տեղափոխող անձի կողմից տրված տեղեկանք ապրանքի ձեռքբերման մասին: Նշված փաստաթուղթը ֆիզիկական անձանցից պահանջվում է միայն այն ապրանքների համար, որոնք հետագայում ենթակա են հաշվառման այլ պետական մարմիններում.
- ✓ ՀՀ մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագիրը.
- ✓ Ապրանքի տեղափոխումը հիմնավորող փաստաթուղթը (ապրանքատրանսպորտային բեռնագիր), բացառությամբ ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված ուղեկցող բեռ համարվող ապրանքների տեղափոխման դեպքերի.
- ✓ Ոչ սակագնային կարգավորման նպատակներով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի բնօրինակները թույլտվություն, լիցենզիա, համապատասխանության սերտիֆիկատ կամ հավաստագիր, եզրակացություն, վկայագիր և այլն.
- ✓ Անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ.
- ✓ ՀՀ մաքսային օրենսգրքին համապատասխան՝ անձի անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթուղթ.
- ✓ Մաքսային վճարումների կատարումը հավաստող փաստաթղթերը.
- ✓ Մաքսային հսկողության նպատակով մաքսային մարմինների կողմից հայտարարատուին տրամադրված և նույն կամ այլ մաքսային մարմնի

հանձնման կամ վերադարձման ենթակա փաստաթղթերը՝ փոխադրման ամփոփագիր, ուղեկցող բեռ չհամարվող ապրանքների ստացման մասին հասցեատիրոջ անունով լրացված կտրոն.

- ✓ ԴՅ մաքսային օրենսդրությամբ նախատեսված կարգով համապատասխան լիցենզիա ստացած անձանցից՝ մաքսային պահեստներում, ազատ մաքսային պահեստներում և անմաքս առևտրի խանութներում մաքսային օրենսդրությանը համապատասխան վարվող գրանցամատյաններ և մաքսային մարմիններ ապրանքների շարժի մասին ներկայացման ենթակա հաշվետվությունները (մաքսային հսկողություն իրականացնելու համար).
- ✓ ԴԴ ներմուծվող ակցիզային հարկով հարկման և պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման անդորրագիրը և դրոշմանիշերի օգտագործման մասին հաշվետվությունը.
- ✓ Արտոնությունների կիրառման համար ԴԴ օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները

- ✓ ԴԴ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների տեղափոխման պայմանների մասին (գործարքի գին, մատակարարման բազիսային պայման, վճարման պայմաններ, գործարքին վերաբերող այլ առկա պայմանավորվածություններ).
- ✓ Մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացվելու պահին ապրանքի ձեռքբերման արտաբժույթի գործող փոխարժեքի մասին.
- ✓ Ընտրված ռեժիմի շրջանակներում ապրանքների տեղափոխման առանձնահատկությունների մասին.
- ✓ Ապրանքն առաքողի (արտահանողի անվան) (անվանման) և հասցեի, կազմակերպությունների համար՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարի մասին.
- ✓ Ապրանքների քանակի մասին.
- ✓ Ապրանքների բեռնահակերի քանակի մասին.
- ✓ Ապրանքը ստացողի (ներմուծողի անվան) (անվանման) և հասցեի, կազմակերպությունների համար՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարի մասին.
- ✓ Հայտարարատուի անվան (անվանման) և հասցեի, կազմակերպությունների համար՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարի մասին.
- ✓ Արտահանող երկրի մասին.
- ✓ Ներմուծող երկրի մասին.
- ✓ Ապրանքներ և ուղևորներ տեղափոխող տրանսպորտային միջոցների մասին.
- ✓ Ապրանքների մաքսային արժեքի մասին.
- ✓ Ապրանքների տեղափոխման երթուղու մասին.
- ✓ Ապրանքի՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) դասակարգման մասին.
- ✓ Ապրանքի քաշի մասին՝ փաթեթավորման հետ միասին և առանց փաթեթավորման.
- ✓ Ապրանքի քանակի մասին՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի լրացուցիչ չափի միավորի.
- ✓ Ապրանքի ծագման երկրի մասին.
- ✓ Կազմակերպության կողմից ստացված ակցիզային դրոշմանիշերի մասին.
- ✓ Հայաստանի Հանրապետությունում գործող ոչ սակագնային կարգավորման համար պահանջվող փաստաթղթերի մասին.
- ✓ Մաքսային և հարկային վճարումների կատարման մասին
- ✓ Մաքսային և ազատ մաքսային պահեստներում, և անմաքս առևտրի խանութներում ապրանքների շարժի մասին.

ԳԼՈՒԽ II. ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Կազմակերպություններ

- Կազմակերպության կողմից ապրանքների **ներմուծման** ժամանակ մաքսային ձևակերպումն իրականացնում է տարածաշրջանային մաքսատունը մաքսային կետից ներքին մաքսային տարանցման փաստաթղթով՝ փոխադրման ամփոփագրով (տես հավելված 2-ը): Մաքսային ձևակերպումն իրականացվում է դրա համար վերադաս մաքսային մարմնի կողմից որոշված վայրերում՝ մաքսային մարմինների աշխատանքային ժամերի ընթացքում: ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումները կամ դրանց հետ կապված առանձին գործողությունները մաքսային ձևակերպումների համար սահմանված վայրերից և մաքսային ձևակերպումներ իրականացնող մաքսային մարմինների աշխատանքային ժամերից դուրս կարող են իրականացվել միայն ապրանքներ տեղափոխող անձանց կողմից ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե ներկայացված գրավոր դիմումի հիման վրա: Դիմումի մեջ պարտադիր պետք է նշվի մաքսային ձևակերպումների իրականացման համար նախատեսվող վայրը և (կամ) ժամանակահատվածը և նման խնդրանքի պատճառը:
- Մաքսային կետի պաշտոնատար անձանց՝ տեսուչների կողմից ապրանքներ տեղափոխող տրանսպորտային միջոցների վրա դրվում են մաքսային ապահովության միջոցներ՝ դրոշմակնիքներ, ստուգվում են ապրանքն ուղեկցող հիմնական փաստաթղթերը՝ ապրանքատրանսպորտային բեռնագրերը, օտարերկրյա տրանսպորտային միջոցներից «ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերով գանձվում է ճանապարհային վճար, որից հետո ապրանքը ստացող և համապատասխան տարածաշրջանային մաքսատանը գրանցված հայկական կազմակերպության անունով լրացվում է վերը նշված փոխադրման ամփոփագիրը: Դրա մեկ օրինակը տրվում է տրանսպորտային միջոցի վարորդին:
- Ապրանքը տեղափոխվում է ամփոփագրում նշված մաքսային պահեստի տարածք, իսկ կազմակերպությանը տրվում է 10 օր՝ համապատասխան մաքսատուն ներկայանալու և վերջնական մաքսային ձևակերպումներն ու մաքսային վճարները կատարելու համար:
- Կազմակերպությունների կողմից ՀՀ մաքսային տարածք ներմուծվող տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներն իրականացվում են նույն կարգով, ինչ կարգով որ ձևակերպվում են ապրանքները: Կազմակերպության կողմից ներմուծվող տրանսպորտային միջոցի համար մաքսային կետում լրացվում է փոխադրման ամփոփագիր, համապատասխան տարածաշրջանային մաքսատանը տրանսպորտային միջոցը ընդհանուր կարգով համապատասխան մաքսային ռեժիմով հայտարարագրվում է բեռնային մաքսային հայտարարագրի միջոցով (ԲՄՀ), որի մեկ օրինակն էլ ներկայացվում է ՀՀ ներքին գործերի նախարարության պետավտոտեսչություն՝ գրանցման համար:

Ֆիզիկական անձինք

Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքները և տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային ձևակերպման սահմանային մաքսային կետերում: ՀՀ մաքսային կոմիտեն կարող է թույլատրել առանձին ապրանքատեսակների մաքսային ձևակերպումը որոշակի մաքսատներում կամ մաքսային կետերում: ՀՀ մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձինք պարտադիր ներկայացնում են մաքսային հայտարարագիր (տես հավելված 3):

Առանց մաքսային վճարների ՀՀ տարածք ներմուծվող ապրանքները

- Ֆիզիկական անձանց թույլատրվում է առանց մաքսային վճարների ՀՀ մաքսային տարածք ներմուծել.
 - որպես ուղեկցող բեռ (ֆիզիկական անձանց հետ միաժամանակ ՀՀ մաքսային սահմանը հատող, ինչպես նաև ֆիզիկական անձից անկախ պատճառներով ուշացած կամ ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին կորսված կամ սխալմամբ այլ տեղ ուղարկված ուղեբեռը) ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված չէ 0 տոկոս և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կգ, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը.
 - միջազգային փոխադրումներով փոխադրվող ապրանքներ (ծանրոցներ), որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կգ-ը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը.
 - նույն անձը վերոնշյալ արտոնությունից 180 օրվա ընթացքում կարող է օգտվել մեկ անգամ, բացառությամբ ՀՀ կառավարության որոշումների հիման վրա ստեղծվող սահմանամերձ առևտրի շուկաների (Բագրատաշենի և Մեղրու սահմանամերձ առևտրի շուկաներ), երբ նույն անձը նախատեսված արտոնությունից մեկ ամսվա ընթացքում կարող է օգտվել մեկ անգամ.
 - ստորև նշված ապրանքատեսակներից հետևյալ քանակություններով.

ԿԵԼԵՅՈՒՄ 1

| Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ | Ապրանքի անվանումը | Քնարային չափը |
|-------------------------------|--|---------------|
| 02 | Միս և մսի ենթամթերք | 10կգ |
| 03 | Չկենդան, խեցգետնամաններ, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ, բացառությամբ՝ | 10կգ |
| 0301 0302 70 | - կենդանի ձուկ այդ թվում՝ ձկան խավիար | 0,5կգ |
| 04 0408 11 | Կաթ և կաթնեղեն, թռչնի ձու, բացառությամբ՝ | 10կգ |
| 0 407 | - ձվի փոշի այդ թվում՝ թռչնի ձու | 100 հատ |
| 08 | Ուտելի պտուղներ, ընկույզ, բոստանային կամ ցիտրուսային մշակաբույսերի կեղևներ և կճեպներ | 10կգ |
| 09 | Սուրճ, թեյ, մատե (պարագվայական թեյ) և համեմունքներ | 1կգ |
| 1206 00 | Արևածաղկի սերմ | 10կգ |
| 15 | Կենդանական կամ բուսական ծագում ունեցող ճարպեր և յուղեր, դրանց ճեղքումից ստացվող նյութեր, պատրաստի սննդայուղեր, բուսական կամ կենդանական ծագում ունեցող սնուցիչ, բացառությամբ՝ | 10կգ |
| 1515 30 100 | - գերչակի յուղ | |
| 16 | Մսի, ձկան, խեցգետնամաններից, կակղամորթերից կամ ջրային այլ անողնաշարավորներից արտադրանք | 5կգ |
| 1604 30 | այդ թվում՝ ձկան խավիար և խավիարի փոխարինիչներ | 0,5կգ |
| 1704 1704 10 | Շաքարից պատրաստված հրուշակեղեն այդ թվում՝ ծամոն | 10կգ 0,2կգ |
| 18 1801 | Կակաո, կակաոյից պատրաստված մթերք, բացառությամբ՝ | 5 կգ |
| 1902 | - կակաո հատիկավոր, աղացած, չոր կամ բովված | |
| 1902 | Մակարոնեղեն | 5կգ |
| 1904 | Հացահատիկային մշակաբույսերից պատրաստված կերակրատեսակներ | 5կգ |
| 1905 30 | Քաղցր թխվածքաբլիթ, վաֆլի | 5կգ |

| Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ | Ապրանքի անվանումը | Բնաիրային չափը |
|---------------------------------------|--|---|
| 21 2102 | Տարբեր տեսակի սննդամթերք, բացառությամբ՝ - դրոժներ | 1կգ |
| 22 | Ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքներ, քացախ | 2 լիտր կամ 1շիշ, եթե 1 շիշ տարողությունը 2 լիտրից ավելի է |
| 2402 | Սիգարներ, ծայրը կտրած սիգարներ, սիգարելաներ (բարակ սիգարներ) և սիգարետներ՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով այդ թվում՝ սիգարներ սիգարելաներ սիգարետներ (ֆիլտրով կամ առանց ֆիլտրի) | 10 հատ 400 հատ 400 հատ |
| 64 6406 | Կոշիկ, բացառությամբ՝ - կոշիկի մասեր | 5 գույգ |
| 91 9104 00 100 9108, 9112, 9114 | Ժամացույցներ և ժամացույցների մասեր, բացառությամբ՝ - ժամացույցներ քաղաքացիական ավիացիայի համար - ժամացույցների մասեր | 3 հատ |

- իրենց վրա կրվող կամ ձեռքի ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը: Որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում, կամ որոնք ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա (բացառությամբ՝ ծանրոցների տեսքով ստացվող ապրանքների):
- մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը.
- ՀՀ ֆիզիկական անձանց ժառանգական գույքը՝ մաքսային մարմիններին ժառանգության մասին համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում.
- ցանկացած արտարժույթ՝ անսահմանափակ քանակությամբ:

Օտարերկրյա անձանց կողմից ներմուծվող ակնհայտ առևտրային քանակության ապրանքներ

- Օտարերկրյա անձանց կողմից ակնհայտ առևտրային քանակությամբ ապրանքներ ներմուծելու համար պահանջում է՝
 - ներկայացնել ՀՀ անձի հետ կնքված մատակարարման պայմանագիրը, կամ
 - օրենքով սահմանված կարգով գրանցվել որպես ՀՀ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ:
- Վերը նշված պահանջները չկատարելու դեպքում մաքսային մարմիններն արգելում են ապրանքների ներմուծումը: Ակնհայտ առևտրային քանակությամբ ապրանքների բնաիրային չափերը ներկայացված են հավելված 4-ում:

Բնաիրային կամ գումարային քանակությունները գերազանցող ապրանքների ձևակերպումը

- Մաքսային օրենսդրությամբ սահմանված ապրանքների բնաիրային կամ գումարային քանակությունները գերազանցելու դեպքում.
 - Ֆիզիկական անձինք հայտարարագրից բացի լրացնում և մաքսային կետի տեսուչին են ներկայացնում ԲՄՀ (տես հավելված 5): ԲՄՀ հիմնական թերթիկի վրա հայտարարագրվում է միայն մեկ տեսակի (ծածկագրի)

ապրանք, իսկ ապրանքի տեսակի բազմազանության դեպքում՝ ամեն լրացուցիչ թերթիկի վրա հայտարարագրվում են մինչև 3 տեսակի ապրանքներ (տես հավելված 5ա):

- Հայտարարագրի և ԲՄՀ-ի լրացման կարգը ստուգելուց հետո մաքսային կետի տեսուչի կողմից լրացվում են դրանց համապատասխան սյունակները: Հայտարարագիրը և ԲՄՀ-ն կնքվում է տեսուչի անձնական կնիքով:
- Այնուհետև, մաքսային կետի տեսուչի կողմից իրականացվում է ֆիզիկական անձանց ապրանքների զննում: ԲՄՀ-ում նշված և փաստացի առկա ապրանքների համապատասխանության դեպքում լրացվում են մաքսային վճարումների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ մաքսային վճարների բյուջե փոխանցման հանձնարարական (տես հավելված 6) և մաքսավճարի գանձման անդորրագիր (տես հավելված 7): Փաստաթուղթը կնքվում է ձևակերպող տեսուչի անձնական կնիքով, որը տրվում է ֆիզիկական անձին մաքսային վճարումներ կատարելու համար:
- Ձննումն իրականացնելու ժամանակ հայտարարագրում նշված տեղեկությունների և փաստացի առկա ապրանքների անհամապատասխանության դեպքում զննումն իրականացնող տեսուչը կազմում է մաքսային կանոնների խախտման արձանագրություն:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված ոչ սակագնային կարգավորման անհրաժեշտության դեպքում ֆիզիկական անձը ներկայացնում է իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթերը:
- Անհրաժեշտության դեպքում հայտարարագրվող ապրանքների նկատմամբ ՀՀ պետական մարմինների կողմից իրականացվում է անասնաբուժական, բուսական-սանիտարական և այլ տեսակի հսկողություն:

Անհատական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումը

- Հայտարարագրման են ենթակա ինչպես ՀՀ մաքսային տարածք «ներմուծում ազատ շրջանառության համար» և Հայաստանի Հանրապետությունից «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմներով ներմուծված և արտահանված, այնպես էլ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային տարածք ներմուծված տրանսպորտային միջոցները:
- Այս դեպքերում մաքսային ձևակերպումների ժամանակ, բացի սահմանված կարգով հայտարարագրի լրացումից, կախված փոխադրվող տրանսպորտային միջոցի մաքսային ռեժիմից, լրացվում են նաև «Արտասահմանից ՀՀ ժամանակավոր ներմուծված ավտոտրանսպորտային միջոցների պետավտոտեսչությունում գրանցվելու համար թույլտվություն» և «ՀՀ ներմուծված ավտոտրանսպորտային միջոցների գրանցման վկայական ձևերը (տես հավելվածներ 8 և 9):
- ՀՀ մաքսային տարածք ներմուծվող անհատական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումները կատարվում են այն մաքսային կետերում, որոնցով նշված տրանսպորտային միջոցը ներմուծվում է հանրապետության մաքսային տարածք: Միայն բացառիկ դեպքերում (օրինակ՝ երբ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրում և այլ փաստաթղթերում առկա են անճշտություններ կամ ջնջումներ, երբ մաքսային կետին չեն ներկայացվում տրանսպորտային միջոցի ձեռքբերման փաստաթղթերը և այլն) նշված տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումները կարող են կատարվել տարածաշրջանային մաքսատներում (այս դեպքում մաքսային կետերի կողմից լրացվում է փոխադրման ամփոփագիր և տրանսպորտային միջոցը ենթակա է ձևակերպման մաքսային կետի կողմից սահմանված ժամկետում բայց ոչ ավելի, քան ներմուծման օրվանից տասնօրյա ժամկետում):
- ՀՀ ներմուծված ավտոտրանսպորտային միջոցների գրանցման վկայականը (հավելված 9) լրացվում է երեք օրինակից, որոնցից առաջին օրինակը տրվում է

ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ նրա կողմից լիազորված անձին՝ այն ներկայացնելու ԶԳ ներքին գործերի նախարարության պետավտոտեսչություն՝ սահմանված կարգով տրանսպորտային միջոցը հաշվառելու կամ այն հաշվառումից հանելու համար: Մյուս երկու օրինակները մնում են մաքսային կետերում: Վկայականում չի թույլատրվում կատարել ջնջումներ և ուղղումներ, բոլոր սխալ տեղեկություններն ուղղվում են մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից սխալ տեղեկության վրա գիծ քաշելով և ճիշտ տեղեկությունը նշելով:

- ▶ Մաքսային ձևակերպումների ժամանակ տրանսպորտային միջոց տեղափոխող ֆիզիկական անձը ԶԳ մաքսային մարմիններին է ներկայացնում տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը և դրա ձեռքբերման փաստաթղթերը (հաշիվ-ապրանքագիր, առք ու վաճառքի պայմանագիր): «Ժամանակավոր ներմուծում մաքսային ռեժիմի դեպքում ներկայացվում է միայն տեխնիկական անձնագիրը:

Ներմուծման համար հատուկ թույլտվություններ պահանջող ապրանքներ

- ▶ ԶԳ տարածքով ներմուծման համար հատուկ թույլտվություն են պահանջում հետևյալ ապրանքները.
 - մարտական զենք, դրա զինամթերքը (ռազմամթերք), մասերը և պարագաները, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 8710 (տանկեր և մարտական այլ ինքնագնաց զրահանքեցեղաներ, սպառազինությամբ կամ առանց սպառազինության, դրանց մասերը կամ պարագաները) և 9306 (ռումբեր, նռնակներ, տորպեդներ, ականներ, հրթիռներ և մարտական զործողությունների վարման նմանատիպ միջոցներ և դրանց մասեր, փամփուշտներ, այլ զինամթերք (ռազմամթերք), արկեր և դրանց մասեր, ներառյալ կոտորակը և փամփուշտի խիցերը) ենթախմբերին դասվող ապրանքներ (բացառությամբ 9306 29 100 ծածկագրին դասվող ապրանքների), Զայաստանի Զանրապետությունում հսկվող դեղեր և թմրանյութեր, և միջուկային (ռադիոակտիվ) նյութեր: Տվյալ ապրանքների ԶԳ մաքսային սահմանով տեղափոխումն իրականացվում է ԶԳ սահմանած հատուկ կարգով ԶԳ կառավարության թույլտվությամբ:
 - ԱՏԳ ԱԱ 38 08 ապրանքային ենթախմբում ընդգրկված բույսերի պահպանության համար քիմիական միջոցներ (օրինակ՝ միջատասպան նյութեր, ռոդենցիտիդներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ, հակածիլային և բույսերի աճը կարգավորող միջոցներ, ախտահանիչ և համանման միջոցներ, բաժնեծրարված փաթեթավորումով մանրածախ առետրի համար կամ պատրաստի պատրաստուկների ու արտադրանքի ձևով ներկայացված, օրինակ՝ ծծմբով մշակած ժապավեններ, պատրույզներ, մոմեր, կպչուն թուղթ ճանճերի դեմ): Այս ապրանքների ներմուծումը կատարվում է ԶԳ գյուղատնտեսության նախարարության տված եզրակացությունների հիման վրա:
 - դեղեր և (կամ) դեղանյութ, որոնց ներմուծումը կատարվում է ԶԳ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրի հիման վրա: Նշված սահմանափակումը չի տարածվում.
 - անասնաբուժության ոլորտում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների վրա.
 - այն դեղերի և դեղանյութի վրա, որոնք նախատեսված են արտասահման մեկնող կամ արտասահմանից ժամանող անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար և չեն զերագանցում «10 անվանում, յուրաքանչյուրից երեքական սպառողական փաթեթ քանակը, եթե փաստաթղթով հիմնավորված չէ բուժման համար անհրաժեշտ ավելի մեծ քանակը.
 - ԶԳ-ում միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների, դրանց անձնակազմի կողմից իրենց սեփական կարիքների համար ԶԳ ներմուծվող

դեղերի և (կամ) դեղանյութի վրա:

Ներմուծման համար արգելված ապրանքներ

- ▶ Համաձայն մի քանի ռեժիմների՝ հետևյալ ապրանքների ներմուծումը ՀՀ տարածք արգելվում է.
 - «Սեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքներն են բոլոր տեսակի թափոնները, բացառությամբ ՀՀ և տնտեսական զարգացման նախարարության դրական եզրակացության և ՀՀ բնապահպանության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծվող թափոնների և պիտանիության ժամկետն անցած ապրանքներ:
 - Պոռնոգրաֆիկ բովանդակության նյութերի համար, ապրանքներ տեղափոխող անձի համաձայնությամբ, կարող է կիրառվել միայն «ոչնչացում մաքսային ռեժիմը»:
 - «Ներմուծում ազատ շրջանառության համար, «ներմուծում անմաքս առևտրի խանութ», «ժամանակավոր ներմուծում՝ վերանշակման համար», «ժամանակավոր ներմուծում և «ոչնչացում մաքսային ռեժիմներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքներն են «Օզոնային շերտի պահպանության մասին Վիեննայի կոնվենցիայի և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրության կողմ հանդիսացող երկրների կարգավիճակ չունեցող պետություններից ներմուծվող նյութերը, ինչպես նաև ավտոմոբիլային բենզինը, որի մեջ կապարի պարունակությունը գերազանցում է 0.013 գ/լ (ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 271000340 և 271000360):
 - «Ոչնչացում մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքներն են կենդանի կենդանիները և բույսերը, եթե դրանք չեն հանդիսանում անբուժելի վարակի աղբյուրներ, պատմական, մշակութային և հնագիտական արժեք ներկայացնող առարկաներ:

Պարտադիր սերտիֆիկացում պահանջող ապրանքներ

- ▶ Մի շարք ապրանքատեսակների ներմուծման ժամանակ, ելնելով այդ ապրանքների մշանակվածությունից և բնույթից, անկախ դրանք ներմուծող սուբյեկտներից (կազմակերպություն կամ ֆիզիկական անձ), պահանջվում է դրանց որակի պարտադիր հավաստում (սերտիֆիկացում): Պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկը տես հավելված 10ում: Նշված ապրանքների ՀՀ մաքսային տարածք «ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով ձևակերպումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե դրանք համապատասխանում են ՀՀ սահմանված պարտադիր սերտիֆիկացման պահանջներին:
- ▶ Ըստ պարտադիր սերտիֆիկացման կանոններով սահմանված պահանջների՝ ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքները ենթարկվում են սերտիֆիկացման ազգային համակարգի շրջանակներում (այսինքն՝ տրվում է Հայպետստանդարտի կամ նրա կողմից հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների մշանով սերտիֆիկատ), կամ մշված պահանջներին ապրանքների համապատասխանությունը հավաստող օտարերկրյա սերտիֆիկատների ճանաչման և վերածակերպման ճանապարհով: Հայպետստանդարտը ճանաչում է այն օտարերկրյա պետությունների սերտիֆիկատները, որոնց հետ կնքել է սերտիֆիկատների և սերտիֆիկացման արդյունքների փոխադարձ ճանաչման համաձայնագրեր*:

* Այդ երկրներն են ԱՊՀ անդամ բոլոր պետությունները, Իրանի Իսլամական Հանրապետությունը:

- Ապրանքները մաքսային հսկողության ներքո պահպանվում են այնքան ժամանակ, քանի դեռ հայտարարատուն չի ներկայացնում դրանց համար սերտիֆիկացման մարմնի կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատները: Սերտիֆիկացման նպատակով, մաքսային մարմնի թույլտվությամբ, սերտիֆիկացման մարմինը հայտարարատու անձի ներկայությամբ, մաքսային հսկողության ներքո, կարող է զննել ապրանքները, վերցնել դրանց նմուշներն ու օրինակները (որոնք վերցվում են մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ներկայությամբ՝ գործող նորմատիվ փաստաթղթերով հաստատված նվազագույն բավարար քանակությամբ): Նմուշներն ու օրինակները վերցնելու մասին կազմվում է ակտ երեք օրինակից, որը ստորագրում են սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչը, մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձը և հայտարարագրող անձը:
- Համապատասխանության սերտիֆիկատը լրացվում է հայերենով, որի բնօրինակը, մաքսային հայտարարագրի և համապատասխան ապրանքի մաքսային ձևակերպման ու մաքսային հսկողության համար անհրաժեշտ մյուս փաստաթղթերի հետ միասին, ներկայացվում է համապատասխան մաքսատուն կամ մաքսային կետ և չի վերադարձվում հայտարարատուին: Սերտիֆիկատը վավեր է համարվում, եթե «հատուկ նշումներ» սյունակում առկա է «Մաքսային ձևակերպման համար գրառումը, սերտիֆիկացման մարմնի կողմից լրացված են բոլոր տվյալները, սերտիֆիկատը վավերացված է այն տվող մարմնի կնիքով և համապատասխան անձի ստորագրությամբ: Տեքստում ոչ մի ուղղում կատարել չի թույլատրվում:
- Համապատասխանության սերտիֆիկատ չի պահանջվում, եթե.
 - ապրանքը ներմուծվում է որպես ուղեկցող բեռ՝ 0 տոկոս սահմանված մաքսատուրքի դրույքաչափով, 50 կգ չգերազանցող ընդհանուր քաշով, և 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ընդհանուր մաքսային արժեքով, ինչպես նաև,
 - ապրանքը (ծանրոցը) փոխադրվում է միջազգային փոխադրումներով, և դրա ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կգ, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

ԳԼՈՒԽ III. ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Կազմակերպություններ

- Ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ժամանակ, ապրանքների մաքսային ձևակերպումն իրականացնում է տարածաշրջանային մաքսատունը: Կազմակերպությունը սահմանված կարգով ներկայացնում է արտահանվող ապրանքներին վերաբերող բեռնային մաքսային հայտարարագիր: Հայտարարագրի տեղեկությունները ստուգելուց և այն ընդունելուց հետո համապատասխան մաքսատան տեսուչները զննում են հայտարարագրված ապրանքը: Հայտարարագրում նշված տեղեկությունների և փաստացի առկա ապրանքների համապատասխանության դեպքում մաքսատան տեսուչը ԲՄՀ-ի վրա դնում է «բացթողումը թույլատրվում է դրոշմակնիքը: Ջննումն իրականացնելու ժամանակ հայտարարագրում նշված տեղեկությունների և փաստացի առկա ապրանքների անհամապատասխանության դեպքում զննումն իրականացնող տեսուչը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և կազմում է մաքսային կանոնների խախտման արձանագրություն:
- Ոչ սակագնային կարգավորման անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը ներկայացնում է համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթերը:
- Անհրաժեշտության դեպքում հայտարարագրվող ապրանքների նկատմամբ ՀՀ պետական մարմինների կողմից իրականացվում է անասնաբուժական,

- բուսական-սանիտարական և այլ տեսակի հսկողություն:
- Ապրանքը տեղափոխող տրանսպորտային միջոցի բեռնախցիկի վրա դրվում են մաքսային ապահովության միջոցներ՝ թվային համարակալված դրոշմներ: ԲՄՀ մեկ օրինակը տրվում է ապրանքն արտահանող կազմակերպությանը, որպես ապրանքը մինչև ՀՀ սահմանային մաքսային կետը ուղեկցող հիմնական փաստաթուղթ: Կազմակերպությանը տրվում է տասնօրյա ժամկետ՝ ապրանքը ՀՀ մաքսային տարածքից փաստացի արտահանելու համար: Ելքի համապատասխան մաքսային կետում ստուգվում է արտահանվող ապրանքի ԲՄՀ-ն, տրանսպորտային միջոցի տվյալները և դրված դրոշմակնիքների ամբողջականությունը, որից հետո ԲՄՀ վրա մաքսային կետը դնում է «Բեռը ստացված է դրոշմակնիքը և, որպես ապրանքի փաստացի արտահանումը հավաստող փաստաթուղթ, այն ուղարկում է վերադաս մաքսային մարմին: Դրանից հետո արտահանվող ապրանքի բացթողումը մաքսային կետով թույլատրվում է:

Ֆիզիկական անձինք

- Ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ժամանակ ֆիզիկական անձինք օգտվում են Գլուխ II-ում նշված բոլոր արտոնություններից, որը վերաբերվում է ՀՀ մաքսային տարածքով առանց մաքսային վճարների, նշված քանակությամբ փոխադրվող ապրանքներին (տես աղյուսակ 1): Ֆիզիկական անձինք ՀՀ մաքսային տարածքից կարող են արտահանել ցանկացած արտարժույթ՝ մինչև 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք զումարի չափով: Ավելի մեծ քանակությամբ զումարների արտահանումը թույլատրվում է կատարել միայն բանկային փոխանցումների միջոցով: Բոլոր դեպքերում ֆիզիկական անձինք մաքսային կետում պետք է ներկայացնեն ֆիզիկական անձանց մաքսային հայտարարագիր (տես հավելված 3):
- Աղյուսակ 1-ում նշված քանակությունից ավելի մաքսային վճարներ չպահանջող ապրանքների արտահանման ժամանակ, բացի ֆիզիկական անձանց հայտարարագրից, ֆիզիկական անձանց կողմից ըստ սահմանված կարգի լրացվում և մաքսային կետի տեսուչին են ներկայացվում ֆիզիկական անձանց ԲՄՀ (տես հավելված 5):
- Ի տարբերություն ներմուծման, ՀՀ տարածքից բոլոր ապրանքների արտահանման համար օրենքով սահմանված է մաքսատուրքի 0% դրույքաչափ: Բացի այդ համապատասխան օրենքներով օտարերկրյա ֆիզիկական անձանց համար նախատեսված է նաև արտահանվող ապրանքների գնի մեջ ներառվող ավելացված արժեքի հարկը սահմանի վրա վերադարձնելու մեխանիզմ:

Արտահանման համար հատուկ թույլտվություններ պահանջող ապրանքներ

- Հատուկ թույլտվություն պահանջվում է ՀՀ տարածքից արտահանվող հետևյալ ապրանքների համար.
 - մշակութային արժեքներ (ավելի մանրամասն տես ներքևում):
 - ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիներ, որոնց արտահանումը կատարվում է ՀՀ բնապահպանության նախարարության տված եզրակացությունների հիման վրա:
 - ՀՀ ծագում ունեցող սակագնային և ոչ սակագնային կարգավորման ենթակա ապրանքներ, որոնց երրորդ երկրներ վերաարտահանման թույլտվությունը տալիս է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը՝ ՀՀ միջազգային համաձայնագրերի առկայության դեպքում*:

* Ներկայումս վերաարտահանման կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը բազմակողմ համաձայնագիր ունի կնքված միայն ԱՊՀ անդամ պետությունների հետ:

- դեղեր և (կամ) դեղանյութեր, որոնք կարող են արտահանվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված արտահանման հավաստագրի հիման վրա: Նշված սահմանափակումը չի տարածվում.
- անասնաբուժության ոլորտում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների վրա:
- ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող այն դեղերի և դեղանյութի վրա, որոնք նախատեսված են արտասահման մեկնող կամ արտասահմանից ժամանող անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար և չեն գերազանցում «10 անվանում, յուրաքանչյուրից երեքական սպառողական փաթեթ քանակը, եթե փաստաթղթով հիմնավորված չէ բուժման համար անհրաժեշտ ավելի մեծ քանակը:
- ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների, դրանց անձնակազմի կողմից իրենց սեփական կարիքների համար ՀՀ ներմուծվող դեղերի և (կամ) դեղանյութի վրա:

Արտահանման համար արգելված ապրանքներ

- «Արտահանում՝ ազատ շրջանառության համար», «Ժամանակավոր արտահանում», «Ժամանակավոր արտահանում վերանշակման համար և «ներմուծում անմաքս առևտրի խանութ մաքսային ռեժիմներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքներն են.
 - Պետական գաղտնիք պարունակող նյութերը, և
 - ՀՀ-ում գրանցված ապրանքային նշաններով մականշման ենթակա, սակայն չմականշված ալկոհոլային խմիչքները:


Անհատական օգտագործման տրանսպորտային միջոցների արտահանումը

- ՀՀ տարածքից «արտահանում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմներով արտահանվող անհատական օգտագործման տրանսպորտային միջոցները ենթակա են հայտարարագրման: Այս դեպքերում մաքսային ձևակերպումների ժամանակ, բացի սահմանված կարգով հայտարարագրի լրացումից, կախված փոխադրվող տրանսպորտային միջոցի մաքսային ռեժիմից, լրացվում է նաև «Արտասահմանից ՀՀ ժամանակավոր ներմուծված ավտոտրանսպորտային միջոցների պետավտոտեսչությունում գրանցվելու համար թույլատվություն ձևը (տես հավելված 9):
- ՀՀ մաքսային տարածքից արտահանվող անհատական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումները կատարվում են այն մաքսային կետերում, որոնցով նշված տրանսպորտային միջոցն արտահանվում է հանրապետության մաքսային տարածքից: ՀՀ արտահանված ավտոտրանսպորտային միջոցների գրանցման վկայականը (հավելված 9) լրացվում է երեք օրինակից, որոնցից առաջին օրինակը տրվում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ նրա կողմից լիազորված անձին՝ այն ներկայացնելու: ՀՀ ներքին գործերի նախարարության պետավտոտեսչություն սահմանված կարգով տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու համար: Մյուս երկու օրինակները մնում են մաքսային կետերում: Վկայականում չի թույլատրվում կատարել ջնջումներ և ուղղումներ, բոլոր սխալ տեղեկություններն ուղղվում են մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ սխալ տեղեկության վրա գիծ քաշելու և ճիշտ տեղեկությունը նշելով:
- Մաքսային ձևակերպումների ժամանակ տրանսպորտային միջոց տեղափոխող ֆիզիկական անձը ՀՀ մաքսային մարմիններին է ներկայացնում տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը և դրա ձեռքբերման փաստաթղթերը (հաշիվ-ապրանքագիր, առք ու վաճառքի պայմանագիր):

Մշակութային արժեքների արտահանումը


- ԴՅ մշակութային ժառանգության պահպանման, մշակութային արժեքների (տես պատկերներ 1 և 2) ապօրինի արտահանման և ներմուծման և այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցման կանխման նպատակով Հայաստանի Հանրապետությունում սահմանված է մշակութային արժեքների տեղափոխման յուրահատուկ ընթացակարգ*:
- Մշակութային արժեքների արտահանումը և ներմուծումը կարգավորելու և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ԴՅ մշակութային** նախարարության համակարգում ստեղծված է հատուկ լիազորված մարմին՝ մշակութային արժեքների պահպանության գործակալություն, որը.
 - որոշում է ընդունում մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման վերաբերյալ, գրանցում է արտահանվող արժեքները, ժամանակավորապես արտահանվող մշակութային արժեքները,
 - տալիս է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր, որի համար զանձում է տուրք:
- Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիրը հիմք է տալիս նշված արժեքները ԴՅ մաքսային սահմանով տեղափոխելու համար: Առանց նշված վկայագրի մշակութային արժեքների արտահանումն արգելվում է, բացառությամբ մշակութային նշանակություն ունեցող սերիական և զանգվածային արտադրության առարկաների և ժամանակակից հուշանվերային արտադրանքների:
- Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման դեպքում մաքսատուրք չի գանձվում: Սակայն պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ ստեղծագործության, օրինակ՝ նկարի, հեղինակն արտասահմանյան ցուցահանդեսում ցուցադրելու նպատակով արտահանում է իր ստեղծագործությունը և արտահանելիս այն չի ձևակերպում «ժամանակավոր արտահանում մաքսային ռեժիմով, որի հետևանքով ստեղծագործությունների Հայաստանի Հանրապետություն վերաներմուծման ժամանակ գանձվում են համապատասխան մաքսային վճարներ: Նման դեպքերում պարտադիր խորհուրդ է տրվում արտահանվող մշակութային արժեքները հայտարարագրել «ժամանակավոր արտահանում մաքսային ռեժիմով՝ հետագա բարդություններից խուսափելու համար:

Այլ ուսակ 1



* Տես «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. մարտի 5-ի «Մշակութային արժեքների և առարկաների արտահանումը կարգավորելու մասին» թիվ 137 որոշում:
 ** Երիտասարդության հարցերի և սպորտի

Աղյուսակ 2



ԳԼՈՒԽ IV. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Մաքսատուրքեր

- Մաքսատուրքերը երկրի մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներն են: Մաքսատուրքերը և դրանց դրույքաչափերը սահմանվել են ՀՀ մաքսային օրենսգրքով:
- Մաքսատուրքերն ըստ գործառնության բնույթի լինում են.
 - արտահանման՝ վճարվում են ՀՀ մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար**,
 - ներմուծման՝ վճարվում են ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար, և
 - սեզոնային՝ վճարվում են տարվա որոշակի ժամանակահատվածում առանձին ապրանքներ ՀՀ մաքսային տարածքից արտահանելու կամ այդ տարածք ներմուծելու համար***:

* Ավելի մանրամասն տեղեկատվություն մաքսային վճարների մասին պլանավորվում է տպագրել առանձին գրքույկով:
 ** Ներկայումս սահմանված է մաքսատուրքի 0% դրույքաչափ:
 *** Ներկայումս Հայաստանում նախատեսված չէ:

- Մաքսատուրքերն ըստ հաշվարկման մեթոդների լինում են.
 - արժեքային (արվալորային). հաշվարկվում են տոկոսներով՝ հարկման ենթակա ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ,
 - յուրահատուկ (հաստատագրված). հաշվարկվում են հատուկ դրույքաչափով՝ հարկման ենթակա ապրանքների չափման միավորի համար, և
 - խառը. զուգակցվում են արժեքային և յուրահատուկ մաքսատուրքերը:
- ՀՀ տնտեսության շահերը պաշտպանելու և տնտեսական գործունեությունը խրախուսելու նկատառումներից ելնելով կարող են սահմանվել նպատակային մաքսատուրքեր, որոնք կարող են լինել.
 - հակազդման՝ կիրառվում են ի պատասխան ՀՀ-ի հանդեպ առանձին անձանց, պետությունների կամ նրանց միությունների խտրական գործողություններ.
 - խրախուսական՝ կիրառվում են առանձին երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերը նվազեցնելու նպատակով:

Մաքսավճար

- Մաքսավճարը մաքսային ծառայությունների դիմաց կատարվող վճար է, որի չափերը սահմանված են ՀՀ մաքսային օրենսգրքով: Մաքսավճարը պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով:
- Մաքսավճարը գանձվում է սահմանված ծառայությունների մատուցման պահից եռօրյա ժամկետում: Սահմանված չափերից ավելի վճարված մաքսավճարի գումարի վերադարձը վճարողը կարող է պահանջել դրա վճարումից հետո՝ երեք տարվա ընթացքում:
- Այդ գումարը մաքսային մարմինների կողմից հաշվանցվում է վճարողի առաջիկա վճարումների հաշվին կամ վերադարձվում է վճարողին վերջինիս դիմումը ստանալուց 30 օրվա ընթացքում:
Մաքսավճարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ ժամանակին չմուծված գումարի 0.2 տոկոսի չափով:

Ակցիզային հարկ

- Ակցիզային հարկը «Ակցիզային հարկի մասին ՀՀ օրենքով սահմանված ապրանքների ներմուծման համար օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող անուղղակի հարկն է: ՀՀ մաքսային մարմինների կողմից ակցիզային հարկ գանձվում է գարեջուր, խաղողի և այլ գինիներ, գինեմյուս, էթիլային սպիրտ և սպիրտային խմիչքներ (կոնյակ, օղի, լիկյոր, և այլն), ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ, սիգարներ, սիգարեթներ և սիգարետներ՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզին, հում նավթ և նավթամթերքներ, դիզելային վառելիք, նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի) ՀՀ տարածք ներմուծող կազմակերպություններից (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց սահմանված կարգով գրանցված ներկայացուցչություններից և մասնաճյուղերից) և ֆիզիկական անձանցից:
- ՀՀ ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկ վճարող անձանց կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում:

Դրոշմավորում

- Հայաստանի տարածք ներմուծվող ենթակցիզային ապրանքների որակի

նկատմամբ հսկողություն իրականացնելու, հասանելիք հարկերը ճիշտ հաշվարկելու ու գանձելու, ինչպես նաև երկրի քաղաքացիների շահերը պաշտպանելու նպատակով ՀՀ կառավարությունը սահմանել է ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ծխախոտի արտադրանքի, էթիլային սպիրտի, խաղողի և այլ գինիների, և ոգելից խմիչքների դրոշմավորման կարգ:

- ՀՀ ներմուծվող դրոշմավորման ենթակա ապրանքների ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը համարվում է հաշվարկված ակցիզային հարկի կանխավճար:
- Քաղաքացիներն անձնական սպառման համար կարող ՀՀ ներմուծել չդրոշմավորված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ, այդ թվում՝ 400 հատ ծխախոտ և 1 լիտր կամ 1 շիշ (եթե 1 շի տարողությունը 2 և ավելի լիտր է) ակոհոլային խմիչքներ:
- Ակցիզային դրոշմանիշերը ձեռք են բերվում գրանցման վայրի տարածաշրջանային մաքսատանը:
- Ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար պետք է ներկայացնել.
 - դիմում (2 օրինակից),
 - օտարերկրյա կողմի հետ կնքված պայմանագրի բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը համեմատվում է պատճենի հետ և վերադարձվում հայտարարատուին), և
 - հաշվարկ ակցիզային դրոշմանիշերի օգտագործման վերաբերյալ:

Ավելացված արժեքի հարկ

- Հայաստանի տարածք ներմուծվող ապրանքներից և փոխադրամիջոցներից ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) հաշվարկվում և գանձվում է մաքսային մարմինների կողմից, բացառությամբ.
 - կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ՀՀ տարածք ներմուծվող՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքների, որոնց համար օրենքով սահմանված է մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման.
 - ֆիզիկական անձանց կողմից ՀՀ մաքսային տարածք ներմուծվող այն ապրանքների և տրանսպորտային միջոցների, որոնց քանակը կամ արժեքը չի գերազանցում ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված չափերը:
- ԱԱՀ վճարման համար սահմանված է տասնօրյա ժամկետ և վճարումների հետաձգումը համապատասխան բանկային երաշխիքի ներկայացմամբ թույլատրվում է կատարել միայն ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում:

Հաստատագրված վճարներ

- ՀՀ հաստատագրված վճարումներ կատարում են կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ բենզինի, դիզելային վառելիքի և ծխախոտի արտադրանքի ներմուծելու դեպքում*:

Ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար գանձվող ճանապարհային վճարներ

- «Ճանապարհային վճարի մասին ՀՀ օրենքի համաձայն ճանապարհային վճարը Հայաստանում ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով, օրենքով սահմանված կարգով ու չափով պետական բյուջե գանձվող վճար է:


* Բենզինի հաստատագրված վճարները սահմանված են «ՀՀ ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին ՀՀ օրենքով, իսկ ծխախոտի արտադրանքի համար՝ «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին ՀՀ օրենքով»:

- Մաքսային մարմինների կողմից գանձվում են հետևյալ ճանապարհային վճարները.
 - այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը,
 - ժանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը, և
 - մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը:
- Ճանապարհային վճարը մաքսային մարմինների կողմից գանձվում է սահմանային մաքսային կետում՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցները երկրի տարածք մուտք գործելիս:
- Հայաստանի տարածքում 30-ից ավել օր գտնվելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ 30 օրվա (կամ ավելի պակաս ժամկետի) համար այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը հաշվարկվում է և պետական բյուջե մուծվում ՀՀ տարածքում գտնվելու ժամկետը լրանալուց հետո 5 օրվա ընթացքում:

Բնապահպանական վճարներ

- Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է, որի դրույքաչափերը սահմանված են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենքով:
- Բնապահպանական վճարները գանձվում են հետևյալ դեպքերում.
 - վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետող ապրանքներ ներմուծման համար, և
 - շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման համար:
- Շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար վճարից ազատվում են ՀՀ տարածքով տարանցիկ տեղափոխվող ապրանքները:
- ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի հիման վրա և պետական բյուջե է վճարվում ներմուծելիս.
 - այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցների ՀՀ օդային ավազան վնասակար նյութեր արտահանելու համար վճարը վճարվում է ՀՀ տարածք դրանց մուտք գործելու պահին վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան մաքսային մարմիններին:
 - շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար վճարը վճարվում է մինչև դրանց մաքսային ձևակերպումը կամ մաքսային ձևակերպման ժամանակ՝ վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան մաքսային մարմին:

Տարածաշրջանային մաքսատաների գործունեության գոտիներն ըստ վարչական տարածքների*



* ՀՀ սահմանով ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցներով ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսային հսկողության ու ձևակերպման համար

Հավելված 2

Փոխադրման ամփոփագիր

Հաստատված է ՀՀ ՄԱ պետի 20.10.97թ. թիվ 102 կրամանով
ՄԱ-9

| | | | | | | |
|---------------------------|--|--------------------------------------|-----------------------|------------------------------|---------------|--|
| Խիստ հաշվառման փաստաթուղթ | | 1. Փոխադրման ամփոփագրի տեսակը | | * 000000 | | |
| 1 | 2. Բնոց փոխադրող | 3. | 4. | | | |
| Մարտասան օրինակ | 8. Բնոց ստացող/նրբուհուհոջ | 5. | 6. | 7. Լրացման ամսաթիվը | | |
| | | 9. Առաջնան կրկնոց | 10. Առաջող կրկն կողմ | 11. Նշանակված կրկն կողմ | | |
| | | 12. Տրամադրության թիվը | 13. Նշանակման կրկնոց | | | |
| | | 14. Տրամադրության թիվը ստացվեց | | | | |
| 15. Լրացնող մարտական կողմ | | 16. Նշանակման մարտասան/մարտական կողմ | | 17. Մարտական տարածություններ | | |
| Աղյուսակային հարցաթուղթ | 18. Տեղեկ թանկ | Փարկետաշերտ | Աղյուսակների ամփոփում | Ճայռ | Ճանաչող թուղթ | 19. Աղյուսակառուցման թանկ |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| Նվերատրամ փաստաթուղթ | 22. _____ | | | | | 23. Արժեք |
| | 24. Մարտական կողմ կրումը | | | | | A. |
| Տարածման կրկն թուղթ | 25. _____ | | | | | |
| | B. Պարտավորվում եմ մինչև մարտային ձևակերպումների կատարումը չվնասել մարտային ապահովումները և չքիմոնաբախել բնոց: Զգուշացված եմ սույն պայմանի կատարման դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մասին: Ի՞նձ գզուշացրել եմ բնոց նշանակման վայրը հասցենիս նրբուհու և ժամանակի մասին: Բնոց կհասնի նշանակման վայր « _____ » _____ 199 թ. Բնոց փոխադրման ընդունող ստորագրությունը _____ | | | | | 26. Նշանակման կրկնոց և մարտասան |
| | 28. Մարտասան կրումը | | | | | 29. Տեսուչի ստորագրություն և անձնական կնիքի համարը |
| | | | | | | _____ |
| | | | | | | _____ |
| | | | | | | _____ |

Մաքսային հայտարարագիր

ՍԿ-1

ժամանում Մեկնում Տարանցիկ
 Ամիրաժեշտը նշել համապատասխան սյունակում ձևով

1. Տեղեկություններ ՀՀ սահմանը հատող քաղաքացու վերաբերյալ.

_____ | _____ | _____ | Սերիա _____ N _____
ազգանուն | անուն | քաղաքացիությունը | անձնագիր

_____ | _____
որ երկիրը է ժամանել | որ երկիրն է մեկնում

2. ՀՀ Մաքսային մարմիններին ունեն հայտարարագրելու հետևյալ ապրանքները, առարկաները.

Պարտադիր հայտարարագրման են ենթակա բոլոր տեսակի զենքը, զինամթերքը, պայթուցիկ նյութերը, բնորոշիչները, հոգեներզործող նյութերը, դեղորայքը, մշակութային արժեքները, կենդանիները, բույսերը, պարտադիր սերտիֆիկացման ապրանքները

| ապրանքների և առարկաների անվանումը և նկարագիրը | քանակ | | Մաքսային մարմնի նշումները |
|---|--------|---------|---------------------------|
| | թվերով | բառերով | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

4.S

*** ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.**

Մաքսային հայտարարագրում, ինչպես նաև մաքսային մարմնի պաշտոնատար անձին ոչ հավաստի տեղեկություններ տալը առաքացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ:

3. Քաղաքացու ստորագրությունը _____ «__» _____ 199 թ.

4. Ծառայողական նշումների համար

4.S.

5. Տեսուչի ազգանունը և կնիքի համարը _____

Հավելված 4

**Օտարերկրյա անձանց կողմից
«Ներմուծում՝ ազատ շրջանառության համար և «Վերաներմուծում
մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող
ակնհայտ առևտրային քանակության ապրանքների բնահրային չափերը**

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
